

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

# ՄԵԼԿ

Տարեկան գին 10 րուբլ, կես տարեկան 6 րուբլ:  
Առանձին համարները 5 կոպեկով:  
Թիֆլիսում գրվում են միմիայն անդադրադատման մեջ:  
Օտարապետացիք գինում են ուղղակի  
Դպրատն. Редакция «Мелк»

Խմորդրատունը ըստ է առաջին 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոհմ օրերից)  
Հայտարարությունները ըստ է առաջին 2 կոպեկով:  
Հայտարարությունները համար գնալուց են  
խրատանքի րոտին 2 կոպեկով:

## ԲՈՎԱՆԴԱՎՈՐՈՒՄ

ՆԵՐԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ս. Էջմիածնի մասին:  
Նամակ խորհրդից: Նամակ Ախալցխայից: Ներ-  
քին լուրեր: ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Խա-  
ղա: Ֆրանսիա: Նամակ Գերմանիայից: Արտաքին  
լուրեր: ԽԱՌՆ ԼՈՐԵՐԻ: — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: —  
ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

## ՆԵՐԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՍԻՆ

Էջմիածնայ վեհ. կաթողիկոսին նկատմամբ  
տեղի դատաւ գտնականները նշանակելով և  
նորա արարքը քննադատելով ի հարկէ մեր  
պատրուկը կը կատարենք, որովհետեւ ազատ  
լրագրի մը պարտքն է հասարակաց օգուտ  
ամեն նկատմանը վեր դասել, միայն  
ազգին իրական շահն որոնել և ոչ թէ  
շողոքորոտել, քծնել և նկատմանը առ-  
նաջն ընկնել:

Մենք վեհ. բարձր սրբազանութեան անձը  
կը յարգենք և Էջմիածնայ վանքին մէջ  
ընթանող շինք ուրախաբար, բայց չենք ալ  
կրնաք լուծելու մեծ անցնել այն կետերուն  
նկատմամբ, որք ընդհանուր զգուշացումներ  
և զանգատանաց առարկայ են և ահաւա-  
սիկ այդ կետերը:

Ո՛րք և Էջմիածնայ մօտից և ելից ճշը-  
գրիտ հաշիւները Ո՛րք և ինչ են Էջմիած-  
նայ պարիսպներէն դուրս Նորին վեհա-  
փառութեան ազգագուտ գործերն ու ծա-  
ռայութիւններն: Բուն իսկ Էջմիածնայ վե-  
րաբերիւր ընդարձակ վիճակներ ինչո՞ւ ան-  
առաջնորդ կը ֆինանս: Իբրեւ ընդհանրական  
կաթողիկոս ո՛րք են վեհափառութեան  
հայրազորով խնամքներն: Սոյ կաթողիկո-  
սութիւնն հետեւեալ և անվաւեր հօգաւելն  
ի՞նչ կը նշանակէ:

Եթէ մեր այս հարցմանը ճշդիւ կէտ առ  
կէտ կրնան պատասխանել և ըստծները կեն-  
դանի փաստերով և անհրաժեշտ պայցոյցներով  
հաստատել, մենք պատրաստ ենք մինչև  
հիմա մեր գրածներն յետս կոչել և հրա-  
պարակաւ ներում խնդրել, որովհետեւ մենք  
վեհ. սրբազանութեան ոչ թշնամի ենք և ոչ  
ալ որ և է մասնաւոր նպատակ մի ունիմք:

Եթէ ունիմք նպատակ մը, այն ալ սա է,  
որ ընդհանրական կաթողիկոսն իրօք ընդ-  
հանրական կաթողիկոս և ոչ թէ լոկ վա-  
նահայր մը տեսնել կուզենք: Մեր այս  
ջերմ փափագը խիստ համաձայն է ազգա-  
յին բողոքանաց և կարծեմք չը կայ ճշմարիտ  
հայ մը որ այս բանին չը փափաղի:

Եթէ ընդունենք որ Էջմիածնայ վեհ. կա-  
թողիկոսն հայոց ազգին ընդհանրական կա-  
թողիկոսն է, այն ատեն բնաւ իրաւունք  
չունեն հատուակաւորութիւն և գրաբա-  
նութիւն անուանել այն քննադատութիւն-  
ներն, որք իրաց վիճակը կը բացատրեն և  
արդար զգուշացումներ և զանգատանաց  
պատճառները կը յայտնեն:

Վիճաբանութիւնը կը սիրենք, մեր կար-  
ծեացն ու սկզբունքին հակառակ կարծիք  
և սկզբունքներ կը յարգենք, վասն զի կար-  
ծեացն ազատութեան բարեկամ ենք, բայց  
առանց տրամաբանելու վիճաբանելն ոչ կը  
հասկնանք և ոչ կրնանք սիրել, որովհետեւ

այնպիսի վիճաբանութիւն մը պատգամ,  
հրաման, և կամ թշնամանք և անարգանք  
միայն կը պարունակէ, որք իրաւամբ գրա-  
բանութիւն են:

Կարծեաց և սկզբան վիճաբանութիւնը  
փաստի գործութիւն և փաստի քննութիւն կը  
պահանջէ և մենք այսպիսի վիճաբանու-  
թիւն մը սիրով կընդունենք, վասն զի  
լուրջ վիճաբանութիւնը միայն կրնայ հա-  
սարակաց միտքը լուստւորել, խնդրոյն վրա  
փաստաբանելով, պարզելով և ճշմարտու-  
թիւնն ի վեր հանելով:

(Լայս)

### ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

Մարտի 28-ին

Թագաւոր Կայսեր Ալեքսանդր II-ի սպանման  
լուրը շատ տխուր տպաւորութիւն ունեցաւ տե-  
ղիս բոլոր ընտանիքներին վրա, ինչպէս և ամեն  
տեղ: Ամբողջ քաղաքը մտաւ խոր սուգի մէջ,  
զարդարելով աները և խանութները սև գործալ-  
ներով, բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստ կա-  
տարելով և երգում ընդունելով շանդուցեակի  
Յաջորդ Ալեքսանդր III-ին: Երգման հանդէսը  
կատարւում էր համարեա թէ ամենայն օր, ամեն  
եկեղեցիներում մինչև ամսոյս 10-ը: Ինչ որ կը  
վերաբերի հայերին, նրանք ընդունեցին երգումը  
ուսուցչական եկեղեցիներում, ուսուցչական քահանայի  
միջնորդութեամբ, ըստ որում տեղիս հայերը  
չունեն եկեղեցի, իսկ ներկայ գտնվող հայ քա-  
հանապ ազգես լինելով ուսուցչական տարած երգման  
թուղթը կարգով անգամ չէր կարող լեզուն չը  
գիտենալու պատճառով: Քաղաքային դուռն  
ուղարկեց իր կողմից ներկայացուցիչներ որ ներ-  
կայ լինեն ի Տէր հանգուցեալ Կայսրի թաղման  
հանդիսին:

Ամսիս 23-ին բացվեցաւ այստեղ արուեստա-  
կան հանգէս, որտեղ առաջին տեղը ընտան է  
յայտնի հայազգի նկարիչ Ի. Կ. Ալազգովսկու  
նկարը «Արեգակի խաւարից», որ զարմանալի  
խաղութեամբ ներկայացրել է ընտանեան այդ  
գեղեցիկ երեխան: Տեսարաններից ուշագրու-  
թիւնը գրաւում են «Ելաթայի տեսքը» նորն պ.  
Ալազգովսկու, «Սիւլաուստոյի տեսքը» վերեւ-  
չաղիւնի և «Նիւնեայ անտառը» Վլադիմիր  
կը վերաբերի ուրիշ տեսակ նկարների, սրանց  
մէջ արժանի են ուշագրութեան նկարչուհի Գ.  
Եսկոբի, յետոյ Պրիստիլիկովի, Տրուսովսկու  
և այլն նկարները: Սրանց մէջ անհաւաւոր են  
«Ջուրիկի ածող» (Скрипка) պ. Պրիստիլի-  
կովի և այլն: Պատկերներից ամենից լաւ նկա-  
րած է տեղիս համալսարանի բժշկական ֆակուլ-  
տետի պրոֆեսոր Վ. Պ. Լիւրովի պատկերը: Նա  
այնպէս լաւ նկարած է, որ ամենքը, որոնք նրան  
ճանաչում են, կանգնում են ապշած զարմանալի  
նմանութեան վրա: Նայելէս երեւել բանաստեղծ  
Պուշկինի պատկերը: Բացի սրանցից հետաքրքրի-  
կն տիկին Բայելսկի ձեռնապակիների (фартухи)  
վրա նկարած պատկերները: Հանդէսը կը մնայ  
բաց մինչև 5 ապրիլի: Մուտքի գինը նշանակած  
է մարտի 23-ից մինչև 25 մարտի 50 կոպ.,  
Մարտի 26-ից մինչև 31-ը — 20 կոպ. և ապ-  
րիլի 1-ից մինչև 5-ը — 10 կոպ.: Դողոված  
գումարը նշանակած է յօդուտ Պարտիզանա-  
կան ուսումնարանի (Училище садоводства):

Ամսիս 11-ին Տօյց գետի ջուրը շատանալով  
Կուրակ-Խարկովի-Աղովկան երկաթուղու 439  
վերտի վրա վնասեց կամուրջը 10 սաժենի չափ:  
Ջուրը տարածվել է մօտ 3 վերտա, այնպէս որ  
երկաթուղու Բարվենկովո և Ստավովոյի կայա-  
րանների մէջ հաղորդակցութիւնը դադարել է:  
Երկաթուղիների գնացքները դադարել են Կուրակից  
մինչև Գալիլովկա կայարանը, իսկ Բոստովից  
մինչև Սլավկանով: Երկաթուղու վարչութիւնը

աշխատեց վերականգնեցնել յարակցութիւնը դո-  
նեան տեղափոխութեամբ առժամանակ: Հանա-  
պարհորդները այս միջոցին կերակրւում էին կա-  
յարաններում երկաթուղու վարչութեան հաշով:  
Իսկ Խարկովի ընտանիքներից վառելիքի մէջ հար-  
կաւորութիւն ունեցողները իրաւունք ստացան  
գնելու երկաթուղու վառելիքի պահեստից՝ քա-  
ղաքումս յայտնած գներով:

Աթ. Մեքլուսեանց

### ՆԱՄԱԿ ԱՄԱՅԻՍԻՑ

Մարտի 21-ին

Մեր Ախալցխայի Կարապետեան և Եղիարե-  
թեան ուսումնարանները ներկայումս շատ ան-  
նախանձելի դրութեան մէջ են գտնվում, և փո-  
խանակ առաջադիմութեան քայլեր անելու, յե-  
տադիմական են անում: Ի՞նչու. որովհետեւ դիւ-  
ցիպլինան այստեղ շատ նուազ դեր է խաղում,  
ինչպէս ռաբոթըն ասած է՝ որ «ձուկն իր զը-  
խէն կը հօտի»: Այսպէս էլ այստեղ մեր պարսն  
տեսուչ Սամուէլեանը, ինքն թոյլ և դանդաղ  
անձն լինելով՝ ուսումնարաններին ևս վարակում  
է այդ անտոյլ թուութեան մէջ: Նա թէն Գեղ-  
մանիայում է կղել և հաս ու կտոր բան է սո-  
վորել, բայց մանկավարժութեան վերաբերմամբ,  
կարելի է ասել, որ ոչ թէ համա է տեսել, այլ  
թէ համա անգամ չէ ասել, որի ապացոյց կարող  
է լինել իր գործունէութեան արդիւնքը: Նա  
տարւայ ամեն մի ժամանակում աշակերտներ է  
ընդունում ուսումնարաններում, առանց ուսուց-  
չաց գիտութեան և համաձայնութեան, ինչպէս  
հաստատ աղբիւրից տեսնել, որ մօտ օրերս Կա-  
րապետեան դպրոցում ընդունվել են աշակերտ-  
ներ: Նա տարւայ մեծ մասը, կարելի է ասել,  
որ բացակայ է գտնվում ուսումնարաններից թէ  
հիւանդութեան և թէ անարդիւն պատճառներով  
և եթէ դալիս է ուսումնարան, իր դասերի մեծ  
մասը չէ պարագում, կամ ցուցանիքն է թեր-  
թում և կամ թէ կէս ժամ պարագում. բայց վայ  
այն պարագումներին, ապարդիւն պարագումներ,  
և կամ թէ բոլորովին չէ պարագում և ցուցակի  
մէջ գրում թէ ուսումնարանների պաշտօնական  
գործի առիթով չը կարողացաւ պարագել: Ի՞նչ  
է այդ առիթը, ոչ այլ ինչ, եթէ ոչ իր երկար  
դատարկութեամբ իրենց այլ և այլ անձանց հետ, և  
կամ թէ քաղաքային դպրոցում դաս ունենալը:  
Նա մեր դպրոցներում 18 դասի համար 1200  
րուբլ ստանալը սակաւ համարելով՝ քաղաքա-  
յին դպրոցում ևս դասեր է ընդունել Ֆրանսե-  
րէն լեզուից. թողած իր քթի տակ գտնված  
Լուսաւորչայ անուամբ ծխական դպրոցը, որի  
տեղին անգամ չը գիտէ թէ դպրոցը ուր է գտն-  
վում, ինչպէս հետեւալ անցքը ապացուցեց,  
որին մենք հետեւից ակնատես եղանք:

Մարտի 5-ին Կարապետեան, Եղիարեթեան  
և Նոր-Արշալոյս ուսումնարաններում Նորին  
Մեծութեան հանգուցեալ վեհափառ Աղէք-  
սանդր II Կայսեր հոգեհանգիստին կատարելուց  
յետոյ, ուսուցչաց խումբը, առաջնորդութեամբ  
մեր պատուելի պարոն տեսչի, դիմեց դէպի  
յիշեալ Լուսաւորչայ ծխական դպրոցն այնտեղ  
ևս հոգեհանգիստ կատարելու: Բայց ինչ ևս կար-  
ծում, ընթերցող, նա չը հասցրեց նրանց, փո-  
խանակ Լուսաւորչայ ծխական դպրոցը տանելու,  
քաղաքում ուսուցչաց դէպի հիւնք սինապոզան,  
խաղվելով նրա փառաւոր շինութիւնից: Ուրեմն  
կեցցէ մեր մանկավարժ տեսուչը, որ իրեն յանձն-  
ված դպրոցի ճանապարհը անգամ չը գիտէ:  
Հիմա դու սրանից իրականապէս, ընթերցող, թէ  
ինչ դրութեան մէջ պէտք է լինեն Ախալցխայի  
չըջակայ գիւղերի դպրոցները, որոնք գտնվում  
են ևս նրա հսկողութեան ներքոյ, իբրեւ թիմա-  
կան վերատեսչի օգնականի:

Բայց մենք նրան խորհուրդ կը տալին, որ  
թողնէ յիշեալ քաղաքային դպրոցի դասերը և

միայն մեր դպրոցները կարգադրութեան հոգս և  
խնամք տանէ, որ աշակերտաց գրեւորները քիչ  
ջարդվէր և արեւը լճի պէս չը կանգնէր աշա-  
կերտաց ջուր խմելու տեղում: Վերականգնելու  
վրա ևս ուշագրութիւն դարձնէ, որ նրանք իրանց  
պարտականութիւնները ձայտելն կատարեն և ոչ  
թէ դասամիջոցներին ձեռնն վարժապետաց հետ  
միասին աշակերտներից հետ: Բայց յայտնեն,  
մենք պարոն տեսչին խորհուրդ կը տալին, որ  
ձեռք, որ ուսումնական տարուայ ոչ մի ժամա-  
նակում ուսուցչաց դասերի մէջ փոփոխութիւն  
չանէ, որովհետեւ այդ ևս շատ մեծ առիթ է լի-  
նում աշակերտաց յետադիմութեան, որովհետեւ  
նրանք արդէն բաւականին ընտելանալով մի ու-  
սուցչի դասատուութեան եղանակին, ո՞հին, վար-  
մունքին և այլն, յանկարծ նրա տեղ մը նո-  
րին է նշանակում, որը հակապատկեր է ներկա-  
յացնում իր նախորդին ամեն բանով և վերջա-  
պէս այդ տեսակ փոփոխութիւնը հակառակ է  
նորոգեցնում ուսումնարանների վերաբերեալ հաստատ-  
ված կանոնադրութեանց: Ինչպէս նորոգումս լը-  
սեցինք, մի ուսուցչի դասերը յանձնել է մի դիւ-  
ւարական կապիտանի, որը ուսուցչութեամբ եր-  
բէք չէ պարագած եղել, այլ միայն գիւնդունե-  
րուն հնապէս և նախարարէլ կամանդով է վար-  
ժում մի քանի տասնեակ տարիներ: Կարելի է  
որ նա լաւ տեղեակ լինի ուսուցչական լեզուն, տա-  
կայն իբրեւ դասատու: Նա անկարող է, ինչպէս  
մի ամուլայ փորձը արդէն յայտնի ցուց տուեց, որ  
բոլոր աշակերտութիւնները և աշակերտները զըծ-  
գոհ են նրա դասատուութիւնից և կոպիտ ու բիրտ  
վարմունքից որպէս գիւնդունի հետ: Իսկ ենք  
նաեւ, որ այդ դժգոհութեան զանգաւար արդէն հա-  
սել է մեր պարոն տեսչի ակնաւորին, բայց նա ինչ  
դանդաղ է թոյլ լինելով՝ պատասխանել է աշա-  
կերտաց... «տարւայ այսպիսի ժամանակամիջո-  
ցում որոնելից ձեռք համար լաւ ուսուցիչ գտնեմ,  
և ես այժմ նրան ոչինչ չեմ կարող տեսել, իսկ ե-  
թէ դուք կամենում էք, ինքներդ ասացէք»: Ուրեմն  
և աշակերտները պատասխանել են հետեւեալը.

«Շատ բարի, մենք ինքներս գիտենք թէ ինչ  
հերպիւ վարվենք այն գիւնդունական հետ...»  
Հարկաւ պէտք է ասել, որ ինչպէս կարող է  
վարել իր պաշտօնը յիշեալ գիւնդունական մեր  
հայ դպրոցներում, քանի որ ինչը իր միտքը  
անգամ հայերէն պարզ չէ կարողանում արտա-  
յայտել, այն ինչ, մեր կարծիքով, մեր Ախալ-  
ցխայի դպրոցները կարեւորութիւն ունեն այնպի-  
սիներն, որոնք բացի ուսուցչներից գիտնային և  
լաւ հայերէն, որ կարողանան ամեն մի բառ  
թարգմանել և բացատրել մայրենի լեզուով: Բայց  
պէտք է խոստովանել, որ նրան հրաւիրել են ոչ  
թէ ուսուցչական պաշտօն վարելու համար, այլ  
թէ արբանակ լինելու հին քաղաքագլխին, որ-  
պէս զի տեղւոյս Գումայի գործերը, նոր քաղա-  
քագլխի և մի քանի տեղացի աղանդի արար-  
մունքները, հին քաղաքագլուխը հաղորդելով  
յիշեալ գիւնդունական կապիտանին, որ նա  
զրէ ուսուցչական, որով կարողանայ խաչ-  
տառակել թէ նոր քաղաքագլխին և թէ տեղւոյս  
աղանդին, որովհետեւ տեղիս աղանդները հին քա-  
ղաքագլխին զրկելով նախկին պաշտօնից՝ փո-  
խանակ երկու հազար րուբլու, այժմ չորս հա-  
րիւր րուբլով են ծառայեցնում: Նորայեւ  
լուծում ենք, որ նա զանազան միջոցներով  
ձեռք է բերել և քաղաքիկութեան պաշտօնը,  
որի համար ևս ստանում է 400 րուբլ: Ահա այս  
հանգամանքից ոտկալված՝ մեր հողաբարձու հին  
քաղաքագլուխը համոզել է մեր պարոն տեսչին  
և պատուելի թիմական տեսչին, որ վերադիմաւ  
գիւնդունական կապիտանին հրաւիրեն վարելու  
ուսուցչական պաշտօնը: Բայց այստեղ մենք  
զարմանում ենք մեր պարոն թիմական տեսչի  
վարմունքի վրա, թէ ինչպէս կարողացաւ մի  
անձի գրութեամբ համոզվել և տարածում  
միջոցում հրամանագրել, որ գասերը յանձնեն  
յիշեալ գիւնդունական կապիտանին. միթէ նա  
այս բանը մանկավարժական կէտից չը պէտք է

քննէր. արդեօք այսպիսի անյարմար դէպքում ինչպէս կարելի է մի ուսուցչի գասերը միւսին յանձնել, չէ՞ որ հին և նոր ուսուցիչը անպարզ կը մնան հարցաքննութեան ժամանակ իրանց արդարացնելով՝ աւելով կամ առաջինը և կամ վերջինը լաւ չէր պարապել. իսկ այս հանգամանքի չնորհիւ աշակերտները կը զրկվին, որովհետեւ այն նոր նշանակեալ ուսուցիչները՝ այսպիսի մի կարծ միջոցով—մինչև հարցաքննութիւնը հազիւ թէ կարողանան միայն աշակերտներին հետ ծանօթանալ, որ մնայ թէ նըրանք կարողանան մի որ և է յառաջարկութիւն ցոյց տալ:

Ուրեմն վերոյիշեալ անժխտելի իրողութիւնները աչքի առաջ ունենալով՝ հրաւիրում ենք մեր պատւելի թեմական տեսչի ուշադրութիւնը, որ այսպիսի դէպքերում լրջմտօրէն, հեռատեսութեամբ ու խոհականապէս գործէ, որ խաղաղ և զոհ չը դարձնէ մեր ուսուցիչներին մի քանի ցածահոգի անձանց կամայականութեանցը:

Իսկ մեր հայրենակից անապխտացի եղբարց այսքանս կասնք, որ եթէ մենք կամենում ենք մեր ուսումնարանները բարեկարգ—արդիւնաբեր և բարօր դրութեան մէջ տեսնել, որ նրանք համապատասխան լինեն մեր ներկայ պահանջներին ու կարիքներին, պէտք է աշխատենք հեռացնել մի այդպիսի անգործունեաց, դանդաղ և տեսչութեան պաշտօնին անյարմար և անընդունակ անձին և նրա տեղ հրաւիրել մի այլ աւելի բարձրունեաց և այդ բարձր պաշտօնին համապատասխանող անձն, որ կարողանայ վերականգնել մեր մերձիկ կորուստ ուսումնարանները:

Տեղոյս ազգային գործընկեր մէջ ծառայող ուսուցիչների դրութիւնը շատ աննախանձելի է: Նրանք ճանկաստանի խեղճ պաշտօնականներ պէս միայն յուսով են անդրում, ուժիկ չը կայ: Մարտ ամիսը արդէն վերջանում է, իսկ տեղւոյս ուսուցիչները դեռ անցեալ փետրվար ամսվայ ուժիկին էլ չեն ստացել: Զարմանալիս այն է, որ ոչ թեմական վերապահներն է աշխատում վերջ տալու այսպիսի անկարգութիւններին և ոչ հոգաբարձութիւնը ուսումնարանների վարչութեան հետ:

Լսում ենք որ հայր տէր խորհրդը աշխատում է անցեալ տարւածից մնացած գարիները ծախել, ուսուցիչներին ուժիկները շուտով հասուցանելու համար, իսկ հակառակ դէպքում պէտք է գարիները յանձնէ ուսուցչաց խմբին, իրանց ուժիկներին փոխանակ:

Սրբազան Սագինեանցը իրեն յատուկ բնաւորութեամբ արդէն Ախալքալաքի գաւառում չուտերին է գրաւել ու նրանց համակրութիւնը վայելելով՝ բոլորովին մտացել է Ախալքալաքի հակապատկեր Ախալցխային:

\*\*\*

ԵՐԵՎԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Բժիշկ Բարախանց խնդրում է մեզ յայտնել որ այսօր, ապրիլի 4-ին նա կարդաւ և թիֆլիսի կրթութեամբ մի դասախոսութիւն ունենրէն լեզուով «О значении водопочения» Կասախոսութեան սկիզբը 8 ժամին է: Տոմարները 2 ր., 1 ր., 50 և 25 Կ. կարելի է ստանալ կրթութեան շէնքից ամօտ, Շապիւրովի պալատի մօտ և Բորիսովի մազապետում: Կասախոսութեան արդիւնքը նշանակելով է յօդուտ այն ֆօնդի որ կազմում է կովկասեան կայսերական բժշկական ընկերութիւնը տեղական լեզուներով բժշկական բովանդակութեան բրօշուրներ հրատարակելու համար:

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են: «Բացի Մոսկվայի հայ հասարակութենից, որ պատգամաւորութիւն էր ուղարկել Ս. Պետրբուրգ և մի արծաթեայ պսակ տարել հանգուցեալ թագաւորի դագաղի վրա դնելու համար, մի մեծ արծաթեայ պսակ էլ ուղարկվեցաւ լազարեան ձեմարանի կողմից: Պատիւ տարաւ ձեմարանի տեսուչ պ. Քանանեանց, իր հետ տանելով երեք ուսանող լազարեան լիէժնիցի: Տեմադրները ասում են, որ թէև փոքր էր ձեմարանի պսակը, բայց շատ աչքի էր զարկում իր գեղեցկութեամբ: Նրա վրա փորված էր այսպէս. «Ազատարար թագաւորին լազարեան ձեմարանից»:

Մեզ գրում են Մոսկվայից և հետեւեալը՝ «Հանգանակութեան գործը այստեղ բաւական աղող

է գնում, թէև կարող էր և աւելի էլ աղող լինել: Մինչև այսօր հաւաքվել է մօտ 3000 հաւաք բուրդ: Լաւ կը լինէր որ այդ գումարը, ինչպէս որոշված էր, հէնց այժմ բաժանել էին երեք մաս և փոքր առ փոքր ուղարկել էին, ուր հարկն է, այսինքն 600/0, Հայաստանի սովետից օգտին, 200/0 Միացեալ ընկերութեան, իսկ մնացած 20/0 պահելին առ այժմ: Բայց ափսոս որ մասնաժողովի անգամները միայն մի մարդ չըլլում է հանգանակութեան մատնանով և ստորագրութիւններ է հաւաքում: Հաստատ կարելի է առել, որ շատ աւելի կը ժողովվէր, եթէ բոլոր անգամները միասին չըրջէին, միասին գործէին. դա լաւ աղեցնութիւն կունենար հայ հասարակութեան վրա: Եւ որովհետև հանգանակութիւնը դեռ պէտք է շարունակվի, կը յուսանք, որ գործը մէկի վրէ վրա չի մնայ, այլ կը բաժանվի մասնաժողովի միւս անգամներին մէջ, նոյն իսկ հանգանակութեան աշխուրթեան համար»:

ՍԱԼԻԱՆԻՑ մեզ գրում են: «Նորերումս Սալիանում մի հաւի ծնեցած հագերի թւում մէկը երկու գլխանի աշխարհ է եկել, իսկ մարտի 25-ին մի կով ծնեց մի էգ հորթ դարձեալ երկու գլխանի: Հորթի իւրաքանչիւր գլուխը ունի իր առանձին բերանը, երկու երկու ականջներ և երկու երկու աչքեր: Աստիճանութիւնը պատուիրէ է կովատիրոջ խնամք տանել հորթին և օրինաւոր կերպով կերակրել նրան»:

Ահա եօթ օր է որ շարունակ անձրևներ են գալիս Թիֆլիսում: Եղանակը բաւական ցրտեց:

Մեզ գրում են ՆՈՒԽՈՒՅՑ որ Թիֆլիսի դատաստանական պալատի վճռով արդարացրած Ալեքսանդր Սէլիբով Նուխի վերադառնալով մեծ պատուով ընդունվեցաւ Նուխում մէջ հայ հասարակութեան կողմից: Մօտ 100 ձիււոր նրա առաջը դնացին, քաղաքը մտնելու ժամանակ, Նուխի մեզ գրում են որ քննիչ Բէժիշկովին հրաժարեցրած է իր պաշտօնից:

Մի պարոն հաղորդում է մեզ հետեւեալ լուրը, որ թողնում ենք նրա պատասխանատուութեանը. «Նորերումս Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում, պ. տիսչի կադադրութեամբ դպրոցի բարձր դասանների աշակերտները հիմնեցին մի մի ձեռագիր շարքաթաթերթ, որոնց մէջ նկարագրվում են աշակերտների վատ կողմերը, երևի գլուխացներու համար: Զորքորդ դասատան շարքաթաթերթը կրում է «Տգրուկ» անունը, իսկ հինգերորդ դասատան «Սէր և Միտիլիւն» անունը: Յէնգորք պ. Նահապետեանն է»:

ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ մեզ գրում են: «Ղարաքիլիսեցիք փառաւոր կերպով հաղորդում են հայոց լրագիրներին որ ունեն չինած մի փոքրիկ թատրոնական բեմ: Ահա կը նկարագրեն եւ ինչ բան է այդ բեմը: Կա ղալոցի ուսուցչական սենակի մի ծայրում, 4 քայլ երկարութեամբ, 2 քայլ լայնութեամբ մի տախտակեայ բարձրութիւն, որին աւելի կարելի է առել մի փոքր ինչ մեծ մանձնակով կամ տախտ: Հագնելու տեղն էլ բեմից շատ հեռւմ մի դասատուն է, որտեղից հագնված դերասանները դուրս են գալիս բազար, ցեխերը տրորելով, լրտառնուտից մտնում են բեմ և այնտեղից դուրս գալիս: Միտիլներն էլ ընդամենը 5 հոգի կան»:

Մեզ գրում են հետեւեալը: «Ուղուցից հայոց գիւղը բաղկացած է 200 գերդաստանից և 2000-ից աւելի հայ անհատներից: Բնակիչները աշխատանք և ամենայն բարեբանս ընդունակ ժողովուրդ են, բայց բարոյապէս փչացած են: Այստեղ աղքատ է խորին աղիտութիւն, բացի սրատեղի գիւղական հաշառապաններ հարկւրներով կլանում են ազգի և կեղեցիկ փողերը: Անթիւ աւազակութիւններն էլ պատահում են մեզ մօտ, բայց այդ բոլորի վրա ուշադրութիւն դարձնող չը կայ: Մեր միակ միլիթարութիւնը Թիֆլիսի նահանգապետի թոյլտուութեամբ մեզ մօտ նորերումս հիմնված շտեմարանն է: Բայց այդ հիմնարկութեանն էլ սպաւնում է, քայքայումս չնորհով մի քանի ետմող անհատներին: Գիւղը բոլորովին զուրկ է ուսումից»:

Հաղաւտ գիւղից մեզ հաղորդում են որ գիւղի վանքի վանահօր Յովսէփ վարդապետ Խարազեանցի ձեռքով նոր հիմնված դպրոցը լաւ դրութեան մէջ է: Աշակերտները առողջ և զուարթ են, և մարտը հաջնված: Գպրոցի շինութիւնն էլ վայելուչ է և յարմարաւոր մի գիւղական դպրոցի համար: Թղթակիցը աւելացնում է որ այս տարի Լուրս ամբողջ գաւառում մթերքները թանղ չեն և ցանքերը խոտանում են առատ հունձք:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են: «Ղուբայի հայ բնակիչները ապրելով դրացի հրէաների և թուրքերի հետ խառն, յողորովին անբարոյականացել են: Առաջարկեցէք նրանց բարեգործական նըրպատակով մի թերթ ստորագրելու, անպատճառ պատասխան կը լսէք «Վանա մենք էլ սոված ենք, ո՞վ է մեղ մի կտոր հաց տամ»։ Կամ շատ շատ զուրկացիներ կը ստորագրի այդ տեսակ թերթի վրա 20 կամ 50 կօպէկ, ինչքան էլ հաւուստ լինի ինքն: Ղուբայի բնակիչը երկու բանի մէջ միայն զարգացած է՝ նա գիտէ թուղթ խաղալ և խաբել: Անցեալ տարի այստեղի թուղթ խաղացողները վճռեցին թուղթ խաղալուց դոյսացած արդիւնքից մի յայտնի տոկոս յետ գցել բարեգործական նպատակով, բայց երբ որ բաւական փող հաւաքվեցաւ, գարունը հասնելուն պէս, գնացին քաղաքից դուրս և այդ հաւաքած փողով լաւ քէ ֆ արեցին: Ինչ կարելի է սպասել այդ տեսակ հասարակութիւնից: Մենք շատ անգամ ժպտում ենք երբ կարգում ենք այլ և այլ յօդուածագիրների մաքերը, թէ հայերին, որոնք խառն ապրում են ուրիշ ցեղերի հետ, վիճակված է կրթողական ներդրութիւն ունենալ այդ ցեղերի վրա: Ահա ուրեմն Ղուբայի, Թիֆլիսի, Երևանի, Շամախու և այլ տեղերի կատարելապէս փչացած և անբարոյականացրած հայերը սէտք է կրթողական և բարոյականացնող ներգործութիւն ունենան թուրքերի, վրացիների, հրէաների, քուրդերի վրա»:

Ապրիլի 2-ին լոյս տեսաւ ԹԻՖԼԻՍԻՍԻՍ՝ ռուսաց լեզուով հրատարակվող նոր իրաւաբանական շարքաթաթերթ առաջին համարը «Юридическое Обозрение» վերնագրով: Հրատարակիչը պ. Ֆրէնկէլն է, իսկ խմբագիրը պ. Ստեփանովն է: Շարքաթաթերթ տարեկան գինն է 10 ռուբլ:

«Новое Время» լրագիրը լսել է որ Ս. Պետերբուրգի Մարտեան դաշտի վրա շինված բաւազանները հրամայված է տեղափոխել Միմօնօվսկի անվան հրապարակը: Նոյն լրագիրը հաստատ արելւրներից լսել է որ Ջատկից յետոյ թոյլ կը տրվեն մասնաւոր գուարճութիւններ:

Մարտի 1-ի եղեռնագործութեան դատը սկսվել է Ս. Պետերբուրգում: Տեղի պահապանութեան պատճառով եւրօպական տաս հատ լրագիրների ներկայացուցիչներին թոյլ է տուած ներկայ գտնվել դատարանի դահլիճում, իսկ ռուս լրագիրներից միայն հինգ հատը, այն է՝ «Правит. Вѣстн.», «Новое Время», «Моск. Вѣд.», «Голосъ» և «Порядокъ» լրագիրները ունեն դահլիճում իրանց ներկայացուցիչները: Բոլոր լրագիրներից «Новое Время» ամենամանրամասն կերպով տպում է իր թերթի մէջ դատի հաշիւը:

Քան և հինգ հոգուց բաղկացած Ս. Պետերբուրգի քաղաքապետի խորհուրդը ընտրելու ժամանակ մի քանի բնակարանների տէրերը կանայք լինելով, այդպիսով առաջին անգամ կանայք էլ ընտրողական ձայնի իրաւունքը ստացան Ռուսաստանում: Բայց «Порядокъ» լրագիրը պատմում է որ մի քանի բնակարաններում կանայք չը գիտենալով թէ ինչ նպատակով է ներկայանում պօլիցիան, սատակի երկու մէջ էին բնակարաններից միմուտ, երբ պօլիցիան կօմիսայի անդամների հետ ժամը 1-ին գիւղիկայ ներկայացաւ, բնակարանի տէր մի կին, կարծելով որ նրան պէտք է կալանաւորին, սկսեց աղաղակել «Էս ոչինչ բանի մէջ մեղաւոր չեմ» և վախից ուշաթափ ընկաւ: Կօմիսիան սկսեց ուշքի բերել ընտրող տիկնոջը:

Մայրաքաղաքների լրագիրները որպէս լուր հաղորդում են որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի մեծ խնայողութիւններ անել պետական իւրաքանչիւր մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

Լրագիրներին գրում են Ֆլորենցիայից հետեւեալ մարտի 15-ից: Խաղաղական ծովային միևիտոր Ալտօնի գեղձուհիների ընտրութիւնը, որ իսկապէս պէտք է առիթ տար խաղաղական պատգամաւորների ժողովին ահաձուլութիւն յայտնել Կայսրի միևիտարութեանը, յետաձգված է մինչև ծովային միևիտորի իւրաքանչիւր ընտրութեան սկսելը: Այդ գործի ուշացնելու պատճառը այն է, որ ամենքը անհամբերութեամբ սպասում են ընտրողական նոր օրէնքների ընտրութեան սկսվելուն: Պատգամաւորների ժողովի մեծամասնութիւնը հասկացել է, որ ընտրողական վերանորոգութիւնը անձնական շահերից բարձր է և որ այնու ամենայնիւ, ինչպէս ասում է «Reforma» լրագիրը, Կայսրի միևիտարութիւնը առանց այդ էլ շուտով կընկնի: Բոլոր ուղղութիւնների և կուսակցութիւնների լրագիրները գտաւապարտում են այժմեան կառավարութեանը և միայն կիսապաշտօնական «Diritto» և «Italie» լրագիրները լուում են և ցոյց են տալիս, իբր թէ ամեն բան լաւ է կատարվում:

Նորերումս Տուրինի մէջ պրօսուրօրական իշխանութիւնը կալանաւորեց մի բրօշուր, որ գտնվում էր նիշիլիսաների վերջին յանձնարարը: Բացի այդ Նեապօլի մէջ բռնված է «Առաւօտեան Սուրհանդակ» լրագրի համարը Գարիբալդիից Ֆէլիպ Պիային գրված մի նամակով, որի մէջ ասված է, թէ «քաղաքական մարդասպանները ժողովրդի ծշմարիտ բարեկամներ են»: Նշանաւոր է, որ Գարիբալդիի նամակը առաջ տպվեցաւ Վիենայի «Vaterland» լրագրի մէջ և այնուհետեւ արտատպվեցաւ իտալական բոլոր լրագիրների մէջ մի յաւելուածով, թէ երեւի նամակը կեղծ է և միայն «Առաւօտեան Սուրհանդակ» լրագիրը ոչինչ նկատողութիւն չէր արել: Ուշադրութեան արժանի է արմատական մամուլի դրութիւնը Խաղիայի մէջ: Առհասարակ այնտեղ կալանաւորվում են այնպիսի հրատարակութիւններ, որոնք չափից դուրս բացարձակ վերաւորում են հասարակական բարոյականութիւնը: Խաղիայի մէջ իւրաքանչիւր տարի մեծ քանակութեամբ սօցիալական թերթեր են լոյս տեսնում, բայց ոչ ոք նրանց վրա ուշադրութիւն չէ դարձնում: Պրօսուրօրական իշխանութիւնը ծաղրելով է վերաբերվում այդպիսի հրատարակութիւններին, որոնք մի քանի համարներից յետոյ գաղաւորում են Կատալանի պրօֆեսօրի հաշուով վերջին 3 — 1 տարիների ընթացքում մօտ 100 այդպիսի թերթեր են հրատարակվել և դարձեալ դադարել առանց կառավարութեան միջամտութեան: Նրանցից մի քանիսը մինչև անգամ փորձել էին կարմիր թանաքով տպված, կամ կարմիր թերթ վրա հրատարակվել, բայց այնու ամենայնիւ չէին աջողվել: Միայն Միլանի մէջ հրատարակվող «Pleb» լրագիրը 17 տարի գոյութիւն ունի և այն էլ յայտնի չէ, թէ այդ լրագիրը ի՞նչի համար է սօցիալական անունանվում: Եթէ նա պահանջում է հարկերի փոքրացնելը, ընդհանուր քուէարկութեան իրաւունքը (մինչև անգամ կանանց համար), այդ բանին ձգտում են խաղաղական միւս լրագիրներն էլ: Թէպէտ շատերը ասում են, որ Խաղիայի մէջ սօցիալիզմը և կօմունիզմը մեծ աջողութիւն են գտնում, որ Խաղիան քաղաքական սպանութիւններ չհայրենիքն է, որ այնտեղ շուտով կարող է սօցիալական յեղափոխութիւն պա-

տահել, այնու ամենայնիւ կարելի է պնդել, որ խաղիկները երբեք չեն դիմի արմատական միջոցներին: Մինչև անգամ Մարիօի և Բո-միօնի նման խաղիկները քաղաքական հրապա-րակախութիւնը իրանք խոստովանում են, որ վաղ թէ ուշ նրանք կը հասնեն իրանց նպատակին, միայն թէ օրինաւոր ճանա-պարհով, որ ոչինչ չարաբերութիւն չունի քաղաքական սպանութիւնների հետ:

Նորիւրում «Figaro» լրագրի մէջ մի թղթագրութիւն էր տպագրւած Հոմերոս թագաւորի մասին, որ մեծ աղմուկ հանեց: Թղթագիրը ասելով, որ պատիւ էր ունեցել անձամբ խօսել թագաւորի հետ, Հոմերոս բոլորովին չէ հոգում իր տոհմի ապագայ իշխանութեան մասին: Նա ինքը խոստովանում է, թէ իր օրդին, որին խաղիկային մէջ չեն սիրում, ստիպւած կը լինի իր գահը տալ կամ իշխան Ամեդէոսին և կամ ոչ ոք այդ գահին վրա չի բարձրանայ: Այդ հան-գամանքը նրան բոլորովին չէ անհանգստա-նում և նա առանձին միջոցներ չէ գործ դնում զրա առաջն առնելու համար: Նրա միակ հոգան է, քանի որ ժողովրդից ինքը յարգված է, բոլոր ոյժերով նպաստել խա-ղիկային բարօրութեանը և նրան զօրեղ դարձ-նել գիտութեան կողմէ: Երկրի անտեսա-կան վատ դրութիւնը, ահագին հարկերը, խաղիկային անկախութեան և միութեան հա-մար պատերազմական ծախսերից վատացած պետական անտեսութիւնը նրան ամենից շատ անհանգիստ են անում, չաւատացե-լով, ասել է նա մի անգամ լալիկներ, որ ես ամենից շատ ցանկանում եմ աւելի քիչ հարկ վճարել իմ սեփական կալուածների համար: Այժմ ես ինքս շատ հարկ եմ վճարում և լաւ հասկանում եմ, որ այդ-պիսի դրութիւնը անտանելի է և որ բոլոր ոյժերը պետք է գործ դնել այդ դրութիւնը բարւոքելու համար: «Ժողովուրդը զգում է այդ բոլորը և նրա աղմկայի զոյցերը Հոմե-րոսի ծննդեան տօնի պատճառով ցոյց են տալիս նրա անառհման սերը դէպի իր թա-գաւորը: Այդ ցոյցերին մասնակցում էին բաւական և անբաւական խաղա-ցիկները և վերջինները կամենում էին ցոյց տալ, թէ որքան զանազանութիւն կայ ի-րանց գործունէութեան և թագաւորասպան-ների ընթացքի մէջ:

«Observatore Romano» լրագրից հա-ղորդում է, որ պապը դիմել է Ս. Պետե-րբուրգ հարցով, թէ ի՞նչպէս կընդունվի իր պատգամաւորութիւնը, որ նա մտադիր է ուղարկել Ս. Պետեբուրգ թագաւորի թա-գաւորութեան առթիւ: Եթէ բարեկաջող պատասխան ստացվի՝ այդ պատգամաւորու-թեան գլխաւորը կը լինի կարգինայ Վիժի, որ պապ Պիոս IX ներկայացուցելն էր հան-գուցիկ թագաւորի թագաւորութեան ժա-մանակ:

ՌԻՍԻՍԻԱ

Վերջին ժամանակներում կղերական կու-սակցութիւնը Ֆրանսիայի մէջ կարել է իր կապերը օրինականների հետ և աշխատում է բարեկամական յարաբերութիւններ հաս-տատել Ֆրանսիական կառավարութեան հետ: Այդ առթիւով պապի կհապառմանա-կան «Aurora» լրագրում մի յօդուած է տպւած, որից երևում է, թէ պապական կառավարութիւնը մտադիր է ընդհատել իր կապերը օրինական կուսակցութեան հետ և հաշտվել գործերի այն դրութեան մէջ: Իր հիմնական սկզբած, ստիպւած է այդ յօդուածի մէջ, եկեղեցին վրայ է եղել բնական պատկանում է իօզէ, աւելի հեռաքրքրի է, քան այժմանը, շատ աւելի տեսել ու դիմել, շատ աւելի մարմնակ է գաղափարների համար, քան թէ ժամանակակից սերունդը: Այդ հին սե-րունդին պատկանող մարդիկ շատ աւելի ինքնու-

պաշտպան է եղել այն սկզբունքների, որոնք միատեսակ անհրաժեշտ են ամեն տեղ և ամեն ժամանակ: Նա գործադրում է այդ սկզբունքները և պահանջում է, որ նրանք յարգված լինեն բոլոր կառավարութիւններ-րից և ժողովրդներից: Ուրեմն այսպիսի մի ահագին հիմնարկութիւն միթէ կարող է կապել իր վիճակը որ և է կառավարչա-կան եղանակի այս կամ այն կուսակցու-թեան կամ իշխանական սերունդի վիճակի հետ: Ուրեմն անկարելի է եկեղեցին, որ եկեղեցու շահերը համարաշխ լինեն այս կամ այն կուսակցութեան կամ իշխանի շա-հերի հետ: Ֆրանսիական օրինականների ա-ռաջնորդների ձգտումները եկեղեցու պաշտ-պանութիւնը ձեռք բերելու համար շատ հակասակի են: Միապետական կուսակցու-թեան մի քանի առաջնորդներ այսպէս են դատում: Երկրորդութիւնը միատեսակ ֆեո-տալար է թէ եկեղեցու և թէ միապետու-թեան համար և որովհետեւ, երբ երկու հիմ-նարկութիւններին սպառնում է երկրորդը, նրանք պէտք է միանան, ուրեմն եկեղեցին պէտք է դաշնակցութիւն կապէ միապե-տական կուսակցութեան հետ և ընդ-դիմադրէ յեղափոխութեանը, որի ներ-կայացուցիչը այժմեան հանրապետութիւնն է: Այդ եկեղեցուցութիւնը ձիջդ չէ: Ան-կասկած յեղափոխութիւնը ֆեոտալար է թէ եկեղեցու և թէ միապետութեան հա-մար, բայց պէտք չէ մոռնալ, որ Ֆրան-սիայի մէջ անհետացել է միապետութիւնը և ոչ թէ եկեղեցին: Եկեղեցին կարող է ընդդիմադրել իր թշնամիներին, բայց եթէ նա կը կապվի որ և է միապետական կուսակ-ցութեան հետ, դրանով նա հանրապետու-թեան հակառակորդ էր հանդիսանայ և հանրապետութեանը առիժ իր տայ ասե-լով, որ նա, հայածելով եկեղեցուն, ինքնու-պաշտպանութիւն է գործում: Բայց այդ եկեղեցին կարող է կորցնել այն մարդիկ-րանց օգնութիւնը, որոնք, եկեղեցու աղա-տուծիւնը անհրաժեշտ համարելով, աւե-լորով է ֆեոտալար են համարում կոմ-ճամբորի բարձրանալը իր նախնական գահի վրա: Այս երկու պատճառները, լրագրի կարծիքով, կատարելապէս արգարացնում են պապի կատարելութեան գոյոյ և քաղա-քավարի վարմունքը Ֆրանսիայի զանազան կուսակցութիւնների հետ:

Քննելով այս յօդուածի բովանդակութիւնը Ֆրանսիական ազատամիտ լրագրիները հաս-նում են այն եզրակացութեան, որ հոգեւո-րանքութիւնը ստիպված է խոսել Վիժի հանրապետութեան առաջ: Հոգեւորական-ները զգացին վերջապէս, որ նրանց ընդ-դիմադրութիւնը ժողովրդի կամքին՝ ա-պարդէն է և ֆեոտալ է նոյն իսկ եկեղե-ցուն:

ԵՄԵՐԱՆԻ ԳԵՐԲԱՆԻԱՅԻՑ

Բերլին, ապրիլի 3

Քաղաքական կեանքի մասին տեղեկութիւն-ների հետ թէ Գերմանիայի թէ ամբողջ Եւրո-պայի վերաբերութեամբ Մշակիչ ընթերցողնե-րը նոյն իսկ «Մշակի» յօդուածների միջոցով բաւական միջոց ունեն ծանօթանալ: Այդ պատ-ճառով ես կը փորձեմ իմ այս նամակում մի քանի լուրեր հաղորդել, որոնց բնաւորութիւնը քաղաքական չէ, այլ որոնք վերջում են հաս-րակական կեանքում:

Այս օրերս սպասում են այստեղ հայադղի նկարիչ Ալեքսանդրին, որ պիտի այտուցով անցնի Լոնդոն գնալու նպատակով, ուր նա շատ պատկերներ է ուղարկել հանդիսի համար: Գրանց թուում գտնվում են նաև այն երեք մեծ պատ-կերները, որոնք ներկայացնում են Ամերիկայի դիւտը: Յոյս կայ որ Լոնդոնի հանդիսի վերջա-նալուսն պէս այդ պատկերները կանցնեն Եւրո-պայի այլ մայրաքաղաքները, այնպէս որ և մենք ինքնինցնենք, նրանց կը տեսնենք այստեղ: Յաճախելով այստեղի գրականական շրջաննե-րը նորիւրում իմ մի ծանօթիկ տան մէջ պա-տահեցայ երկու նշանուոր անձնաւորութիւնների հետ: Առաջինն է յայտնի միջառան Եպիսկոպոսի իսկ երկրորդը առաջնակէ կուսակցութեան տե-ղում և պատգամաւոր աղջկային ժողովի Լիօն (Léone): Հիմարան ասեմ վերին աստիճանի հա-ճելի և գմայլի ժամեր վայելեցին ես այդ երկու անձնանքների հետ խօսելով: Մեր խօսակցութեան նիւթը թէև սկզբից քաղաքական էր և վերաբե-րում էր գլխաւորապէս Բիսմարկեան յետադը-մական ձգտումներին, բայց շուտով անցանք ան-ցանք պատմական հոդի վրա: Լիօնը հետաքրքր-անցքեր էր պատմում մեզ անցած ժամանակնե-րից, մանաւանդ 1848 թւից: Այն սերունդը, ո-րին պատկանում է Լիօնը, աւելի հեռաքրքրի է, քան այժմանը, շատ աւելի տեսել ու դիմել, շատ աւելի մարմնակ է գաղափարների համար, քան թէ ժամանակակից սերունդը: Այդ հին սե-րունդին պատկանող մարդիկ շատ աւելի ինքնու-

րոյն են և ինչ կուսակցութեան և պատկանէին նրանք, շատ աւելի դուրս կանգնած բնաւորու-թեան տէր մարդիկ են, քան թէ ժամանակակից-ները, որոնք կարծես մոռացել են, կամ չեն սո-վորել իրանց սեփական գլխով դատելու: Իբրև մասնագէտներ, սպէցիալիստներ, այժմեան սե-րունդին մարդիկ, անկասկած, շատ աւելի բարձր են, քան 40-ամ և 50-ամը թեւականների մարդիկ, բայց ինչպէս քաղաքացի, ինչպէս մարդ, ինչպէս բնաւորութիւն ունենող ո՞ր նրանք չեն կարող համեմատվել հինների հետ:

Եպիսկոպոս հաղորդեց ինձ մանրամասն մի գրականական կլուբի մասին (Litterarischer Klub), որ նորիւրում հիմնվեցաւ այստեղ և որի գոյու-թիւնը պահանջ էր դարձել Բերլինի մէջ այդ քաղաքի մեծ կենտրոն գաղափարաց յետոյ: Այն, պահանջ՝ կար մի մասուր կենտրոն, ուր մարդիկ կարողանային տեսնել, խօսել իրար հետ, պահանջ կար հաստատել մի չէրք տեղ, որ կենտրոն պիտի դառնար ամբողջ ինտելիգեն-ցիայի համար: Այսպիսի կլուբ պահաս էր Բե-րլինի համար: Բայց հիմնողները հասկացան, որ անդամութիւնը չը պիտի մատչել լինի ամեն մի ցանկացողին, եթէ ոչ շատ շուտ և շատ հե-տադիմաբար այդ հիմնարկութիւնը կարող էր ա-յն առաւելել, կարող էր մնացած կլուբային ըն-կերութիւններին նմանվել և դադարել մասուր պահանջների իսկական կենտրոն լինելուց: Այս պատճառով մի կողմ թողնելով քաղաքական հայեացքների տարբերութիւնը, հիմնողները վը-ռեցին որ անցած ընտրվելու ցանկացող պիտի ընդամենը մի մասնակցութիւնը, որի անդամները 20 անդամներէ չաւաքված լինի և դրանց թուով 3 պէտք է լինի կլուբի վարչութեան ան-դամները: Այսպիսով հիմնողները յոյս ունեն ճշմարիտ մտաւոր արիւնքի արտաբերութեան օգ-նութեամբ: Պատահմամբ այնպէս եղաւ, որ կլու-բի վարչութեան 5 անդամներից մեծամասնու-թիւնը առաջարկական էր, Եպիսկոպոս նախա-գահ է, իսկ մնացած 4 պարունակելով մէկն է պատգամաւոր և պրօֆեսոր շէնկը: Անդամները վճարում են տարեկան 60 մարկ, ուրեմն մօտ 30 լուր:

Խաղիկային իսկիա կղզու երկրաշարժից և Նից-ցայի թաղանթի ճրկից ֆեոտալների օգտին շարունակում են այստեղ նուէրներ հաւաքել: Բարձր դասի հասարակութիւնը առաջին օրինա-կը ցոյց տուց, բայց և միապետը յետ չեն մը-նում: Սի յայտնի գաղափարահանդիսի (Salon) սեփականատէր այս օրերս իր գահին մի ամ-բողջ օրվայ մուտքի արդիւնքը նուրից իսկիա կղզու ողորմելիներին: Այդ օրը կայսրը Վիլհելմ և նրա ամբողջ զբոսաւանդ եկան պատկերա-հանդէսը նայելու:

Անդրեաս Արծուր

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական պարլամենտում Բակստեր հար-ցում արաւ թիւրքաց հայերի դրութեան մասին: Վիլի պատասխանելով Բակստերին, ասեց, որ երբ որ յուսաց ինչորեք կը վճար, այն ժաման-ակ անգլիական կառավարութիւնը պատ-րաստ կը լինի քննել ամեն առաջարկութիւն, որ նպատակ կունենայ բարւոքել թիւրքահայա-նակ հայերի դրութիւնը:

—«Голосъ» լրագրին հետադրում են Բերլինից որ գերմանական պարլամենտը ընդունել է Վիլհ-լորտի առաջարկութիւնը միջազգային միջոցնե-րի մասին անարխիստների դէմ:

—Անգլիական «Morning Post» լրագիրը կար-ծում է որ պարլամենտի երկու անդամներ՝ Վիլի և Բրաստել իրանց նիւթական միջոցներով պահ-պանում են «Freiheit» սոցիալական թերթը:

—«Freiheit» լրագրի խմբագիր Վոստի դէմ բացած դատը յանձնված է երգուհաներին:

—Անգլիական համալսարանների ժողովի մէջ ընդ-հանուր պրօպոզիտ Չեմս յայտնեց որ Վիլի և Բրաստելի դէմ մեղադրանքը իբր թէ նրանք պահպանում էին իրանց միջոցներով սոցիալիս-տական «Freiheit» լրագիրը, անհիմն է:

—Սերբիական «Несторъ» լրագիրը պահան-ջում է որ Սերբիան էլ իշխանութեան թագա-ւորութիւն յայտնի լուրերի պէս: Այդ յօդուածը անաշուղ տպագրութիւն գործեց Սերբիայի պաշտօնական շրջաններում և պաշ-տօնապէս յայտնվեցաւ որ կառավարութիւնը համարաշխ չէ լրագրի խօսքերի հետ:

—Գուրա Արգայլ հրաժարական տուեց իր պաշտօնից, համաձայն չը լինելով իրաւորական կալուածական իրլի մի քանի կետերի հետ:

—Խաղիկային միջնորդութիւնը ներկայացրեց թագաւորին իր հրաժարականի մասին խնդրքը: Թագաւորը դեռ ես պատասխան չը տուց:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Գուշոի նոր օպերան «Le Tribut de Zamora» Փարիզում ներկայացվեցաւ: Շատ քիչը կերպով լինելուը դարու հաղուստները պատմական մեծ ճշտութեամբ վերականգնված էին: մանաւանդ գե-ղեցիկ էին գեկորայինները: Առաջին երկու գործողութիւնները անցան շատ ստան, բայց վերջին գործողութիւնները ընդունվեցան մեծ համակրութեամբ:

«Journal de St. Petersburg» լրագիրը գտել է մի շատ տարօրինակ յայտարարութիւն Լիվեր-

պուլի մի լրագրի մէջ «Ի գիտութեան հարուստ հարսնացուներին» վերնագրով: «Մի երկտասարդ, քանուհինգ տարեկան հասակի, լաւ կազմուածքով ու գեղեցիկ դէմքով, ձիւներին մեծ սիրող, գե-ղեցիկ ազգանունով, ընտիր կրթութիւն և ու-սում ստացած, առաջարկում է իր սիրտը ու ձեռքը Ամերիկայի Միացեալ-Նահանգների բոլոր կանանց, թէպէս առաւելութիւն է տալիս այրի կանանց, որոնք կարող են իրանց հետ բերել 100,000 Փունտ ստերլինգի չափ բաժինը: Եթէ վերե յիշված երկտասարդին ամուսնութեան հա-մար անյարմար կը գտնեն, նա համաձայն կը լի-նի և գլխաւոր կառավարչին պաշտօնին ընդունել: Եթէ առաջարկին նրան 90—100 Փունտ ստեր-լինգ տարեկան ուժիկ, բնակարան ու կերա-կուր»:

\*\*\*

Փարիզի գիտնականները անխնայ աշխատում են մի նոր նիւթ գտնել գինու Փարիզիկայի համար: Ֆրանսիական բուսաբանական ընկե-րութեան վերջին նիստի մէջ Պետարստը գեկու-ցում արաւ Բազիա անունով մի տեսակ ծառի ծաղիկների մասին, որոնք մեծ նմանութիւն ու-նեն վարդի հետ և որը արդէն վաղուց գոր-ծադրվում է գինու պատրաստութեան մէջ, խառ-նելով այդ ծաղիկի հիւթը ջրի ու շաքարի հետ: Այդ ծառը բուսում է Հնդկաստանում, բարձր տեղերի վրա, ունի լայն, վաղուս տերեւներ: Երկու ծառնակ, նա տալիս է անպիսի թուով պիտո փշեր, որոնց վրա յետոյ ծաղիկ է բաց-վում: Երբ պտուղը սկսում է հասնել, ծաղիկի միւս մասերը սկսում են հաստանալ, մակալել և լցվում են քաղցր և հեղուկ հիւթով: Այդ մաս-լին, հիւթում մասերը հաւաքում, չորացնում են և ամեն մի ծառ այդ բերքից կարող է տալ մինչև հինգ ցնդաներ: Գինեգործները այժմ թող-նելով առավել միջոցները, սկսում են գինու Բազիայի ծաղիկներին, երկու ամսվայ մէջ փա-րկը քանդած են մինչև 250,000 կիլոգրամ այդ ծաղիկներից: Հնդկացիք վաղուց է արդէն որ այդ նիւթից օդի են պատրաստում: Ավերիա-յում այժմ փորձ են անում այդ ծառի տեսակը բուսնել տալ արուեստական միջոցներով:

\*\*\*

Բերլինի թագաւորական պալատում այս օրերս բերված են երկու հազուադիւս և թանգազին հիւրեր՝ երկու փոքրիկ արջեր, որոնց Ս. Պետե-րբուրգից իր հետ բերել էր Վայմարի դուքսը: Լաւ մաքրված լինելուց յետոյ նրանք ներկա-յացվեցան պալատական նշանաւոր անձնանե-րին:

\*\*\*

Ման-Ֆրանցիսկայի թատրոնում ներկայացման ժամանակ մի մարդ բեմի վրա մի բաղի գլուխ է գցում: Գերասանը վերադառնելով այդ տարօրինակ բնան, մոտենում է դէպի հասարակութիւնը և ասում: «Պարոնները, ով էլ ձեզանից իր գլուխը կորցրած լինի, թող չը վախենայ, թատրոնը վերջացնելուն պէս կորցնողը կարող է իր գլուխը ինձանից յետ ստանալ:

\*\*\*

Երկու երեւելի անգլիացի լորդեր, երկուսն էլ հասակաւոր մարդիկ, հերթօգ Բեքֆորդ և Լորդ Բարթոլոմէոսը գրաւ են գալիս թէ կարելի է արդեօք աշխարհիս երեսին մի այնպիսի մարդ գտնել, որ կարողանար ամբողջապէս ուտել մի կենդանի կատու: Այդ երկու յարգիկ լորդերը յայտարա-րեցին իրանց զբաղի մասին հրաւիրելով ցանկա-ցողներին և մի քանի ժամանակից յետոյ յայտնի վում է մի գաղապարէմ հովիւ Դորիշից, այդ հրաւերը ընդունելու դիտաւորութեամբ: Մի խումբ արիւստիստներ մեծ գուարճութեամբ նայում էին, ինչպէս այդ հովիւը իր ձեռքերով մի կենդանի սև կատու կտոր կտոր անելով մօրթիով, ոսկուհներով ամբողջապէս խօսեց:

\*\*\*

«ՄԵՏԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԴԿՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 ապրիլի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի ար-ժէ 97 ռ., երկրորդ 93 ռ. 37 կ., երրորդ 94 ռ. 25 կ., չորրորդ 93 ռ. 37 կ., ներ-քին 5% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 223 ռ. 75 կ., երկրորդ 216 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսերը արժէ 92 ռ. 62 կ., երկրորդ 92 ռ. 62 կ., երրորդ 92 ռ. 62 կ., օսկի 7 ռ. 95 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա ար-ժէ 24,71 պէնս, ռուսաց 100 ռ. Փարիզի վրա արժէ 261 Ֆրանկ 50 սանտիմ: Բօր-տայի տրամադրութիւնը ամառ է:

Խաղաղիկ—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՏՐՈՒՆԻ

# Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Դուրս եկա մամուլի տակից և վաճառվում է «Կենտրոնական» և պ. Զ. Գրիգորյանցի «Կովկասյան» գրադաճառանոցներում՝ Մառա, Ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին՝ Հեղ. Զոն Ստիլարա Բելկի. Թարգմ. Գրիգոր Դաճուկյանի. գինն է 60 կոպեկ: Օտարաբարաբացիք կարող են ուղղակի թարգմանչին գրվել այս հասցեով. Вѣ Тифлисѣ, Учителью Армянской Духовной Семинаріи Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянцу.

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է թարգմանչի հետեւեալ աշխատութիւնը. Մայրական Գաստիարակութիւնը, բնութեան օրինաց վերայ հիմնուած. Հեղ. Ժ. Բամբաստան:

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍ-ՏԵՐ, մաշկերը ամրացնող և նրանց բՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ, վերայ առնող: Գինը 2 ռ. շիշը, ՓՈՍՍԱ-ՅՈՎ ուղղակի 2 ռ. 49 կոպ.:



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻԻՂ, մաշկերը ամրացնելու համար, 1 ռ. ամանը, վրձին զվարյալի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 47—100

Մամուլի տակից դուրս եկա և շուտով կուղարկվի իր բաժանորդներին

**Բ Ա Ֆ Ֆ Ի Ի**

«ԽԵՆԹԸ» արվածներ վերջին ուսումնական պատերազմից:

Գրքը բաղկացած է 400 երեսից, մաքուր տպագրութեամբ:

Գինը 1 ռ. 20 կոպ.:

Յանկայողները ստանալ այս գիրքը, կարող են գրվել ՇՈՒՇԻ հրատարակչին, ԹԻՖԼԻՍ, Յ. Մէլիք-Յաղոբեանցին և թողէս Տէր-Միքայէլեանցին (Արժանաւ քարվանսարայում), ԲԱԳՈՒ, Ալեքսանդր Թարխանեանցին, ԵՐԵՒԱՆ, Աբովի թողէսեանցին և ԹԱՎՐԻՉ Գրիգոր Բէջանեանցին:

Հրատարակիչ Աբել Ապրէսեանց

**ՄԱՄՈՒԼԻ** տակից դուրս եկա և շուտով կը տարածվի «ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱԳԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ» գրքիցը 96 երեսից բաղկացած և տպագրւած **ԵՐԵՒԱՆՈՒՄ**:

Կը ծախվի առաւելագոյն թիֆլիսի մէջ «Կենտրոնական գրադաճառանոցում»:

6—7.

Ամսոյ 5-ին, կիւրակի օրը սուրբ պատարագից յետոյ ժամը 12-ին վառաց Մայր Եկեղեցում կատարվում է տարիկից հոգեհաշտութեան վրաստանի և իմաստիկ հայոց թեմի հանգուցեալ Առաջնորդ բարձր Սրբազան Գաբրիէլ Արքեպիսկոպոսի Այվազեան:

**ԱՆԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ ծախվում են հազիւ դէմ **ԿՈՆՖԵՍՆԵՐ** 40 կ. Փոշուր, խնայի գինի ջերմի դէմ 1 ռ. 50 կ. շիշը, պարսկական **ՇԵՐԲԵՏ**, ցիտրոս մազնիկայի ծարաւի դէմ 70 կ., ամենալաւ **ԿՈՆԵԱԿ** 2 ռ., հին **ՊՈՐՏ-ՎԷՅՆ** ԵՒ խիւս 1 ռ. 40 կ., **ՄԵՂՐԱՄՈՄ** և չոր **ՍԱՊՈՆ** և այլն:

14—15

Դուրս եկա մամուլի տակից և ծախվում է «Կենտրոնական» ու «Կովկասյան» գրադաճառանոցներում **ՄՕԼԻԵՐԻ «ՏՂԱՄԱՐԴԱՆՑ ԽՐԱՏ»**, ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲԻ Գինն է 30 կ.:

**ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ** ցանկանում է ունենալ **ՊՐԻԿԱՇՁԻԿԻ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹԵԱՆ** պաշտօն և գիտէ տեղական **ԼԵՁՈՒՆԵՐ**: Հասցէն թողնել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը:

3—3 (5)

LANGUE ET LITTÉRATURE FRANÇAISE

Un professeur de l'Université de Paris désire donner des LEÇONS. S'adresser à la Librairie Baerenstamm.

3—3

Մամուլի տակից դուրս եկա և վաճառվում է Թիֆլիսի հայ գրադաճառների մօտ Կ. Կոստանեանցի «Գրարատ» բայ երբ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ մի աղիւսակի մէջ, գործնական և գիտական կայան ուսումնական արտադրութեան համար: Գինը՝ հատուկ՝ 25 կոպ., գումարով՝ 20 կ.:

Այս գրքիցը պարունակելով իւր մէջ բայերի մի պարզ նախագիտելիք, յանգիւրի, օրինակների և խոսքահամար ամփոփ աղիւսակներ՝ շատ հեշտացնում է տալիքաց զրաբաւ բայերի ուսումը: Ի նկատի ունենալով գործի օգտակարութիւնը և գինի թիֆլիսից համարձակ կարելի է խորհուրդ տալ զրաբաւ ուսանող աշակերտաց ձեռք բերելու յիշեալ երկաթիւթիւնը:

Նոյն հեղինակի «Հիւսուածք հայ պատմագրութեան», 3 հատոր (3 ռ.) և «հայոց հիմնադրական կրօնը» (30 կ.) կարելի է նոյնպէս Թիֆլիսի գրադաճառներից կամ ուղղակի հեղինակիցն ստանալ:

**ԵՂ. ՍԱԼԻ-ՕՂԼԻ ԾԵԱԽՈՏԻ ԳՐԾԱՐԱՆԻՑ**: Ի նկատի առնելով, որ մի քանի ժամանակից Թիֆլիսի ծխախոտի շատ ԳՐԾԱՐԱՆԱՏԵՐԵՐ լաւ առեւտուր չունենալով, իրանց թոյլ են տալիս **ԿԵՂԾԵԼ** իրանց արդիւնաբերութեան **ԳՐՕՇՄՆԵՐԸ**, որոնք արտադրուած նմանութիւն են ունենում մեր զրօշմների հետ և գրագէտներն էլ նրանց դժուար կը զանազանեն, մեր գործարանը հարկաւոր է համարում **ԶԳՈՒՇԱՑՆԵԼ** գնողներին և առաջարկել նրանց, որ գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնեն մեր **ՖԻՐՄԱՅԻ** վրա. «ԹԻՐԻՔԱՑ ՀՊԱՏԱԿ ԵՂԱՐԲ ՍԱԼԻ-ՕՂԼԻ»:

Գործարան **ՍԱԼԻ-ՕՂԼԻ**

4—5

Въ Редакціи газеты «МШАКЪ»

Продается „ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

144 Արժանաւ գաղթեալ 144 ամենակէսան պահեստ մեքէլի և հայկիւնների.

2րդ նոյնիով մաքսիւրի աւելանալուն ապրանքները առաջագոյն գներով կը ծախվեն.

**ԿՈՆԳՈ-ԹԷՅ** 1 ռ. 5 կ. և 1 ռ. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ռ. 20 կ. և 1 ռ. 40 կ., հիւսնալի **ԿԱՅԱՍԱՌ** 1 ռ. 60 կ. և 1 ռ. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ ԹԷՅ** 2 ռ. առանց թղթի: Անգլիական ըէվոլիւթներ 4 ռ.—40 ռ. և հրացաններ 20 ռ.—200 ռ. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, Զոնսոնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, Տուրնօրի **ԳՐԻՉՆԵՐԸ** և Էկստրակտ կալաօշօյալի ծախելու համար, որոնք վարկի հանգիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան: **ՀՈՏԱԼԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ռ. 65 կ. և ամենալաւը 2 ռ. 30 կ.: Վաճառականներին օգտուէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ռ., կօնֆէկաներ հազիւ դէմ 60 կ. Փոշուր:

56—100

Միւս և այժմ չեղած **ԵԿԵՆՔԻ ԻԻՂ**, **ԲԺԻՇԿ ԸՄԻԴՏԻ**, որ կատարեալագործված է բժիշկ **ՄԵՎՐԻ ԿԻԻ ԴԷՅԶԻՑ**: Ընողը հանում է ամեն տեսակ խոլիւթիւն, եթէ նա բնական չէ: **ԵՐԵՐ ԲՈՒՐԼ** ըստանալուց յետոյ ուղարկվում է **ՄԻ ՇԻՇ** այդ իւղից, մանրամասն խՐՏՆԵՐՈՎ, գործածութեան մասին: Եյդ իւղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր **ԴԵՂԱՏՈՒՆՆԵՐԻՑ** և **ԵԿԵՐԱՆԴՐ ՎԵՆՏԵԼԻՑ**, Կաղանկայա փողոց № 3:

43—52

| Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ |            |                          |               |  |
|---------------------------------------|------------|--------------------------|---------------|--|
| Հաւմ. մասեցեք թէլի ֆունտը             | 1 ռ. 5 կ.  | Մասկայից բերվող թէլի հետ | Ֆ. 1 ռ. 30 կ. |  |
| —                                     | 1 ռ. 10 կ. | —                        | Ֆ. 1 ռ. 40 կ. |  |
| —                                     | 1 ռ. 20 կ. | —                        | Ֆ. 1 ռ. 60 կ. |  |
| —                                     | 1 ռ. 40 կ. | —                        | Ֆ. 1 ռ. 80 կ. |  |
| —                                     | 1 ռ. 60 կ. | —                        | Ֆ. 2 ռ.       |  |
| —                                     | 1 ռ. 80 կ. | —                        | Ֆ. 2 ռ. 50 կ. |  |
| Ամենալաւը                             | 2 ռ.       | —                        | Ֆ. 3 ռ.       |  |
| 62—100                                |            |                          |               |  |

**ՎԱՃԱՌՎՈՒՄ** ԵՆ ԿՈՎ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ. Զ. ԳՐԻԳՐԵԱՆՑԻ:

**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐ**

1. Ա. Մ. Ե. Պ. — Դիւցազունք ըստ Խորենացւոյը Հայի, Արամ, Վահագն. պատկերների պատմական կեանքից: Տիֆլ. 81 թ. գինն է 30 կ.:

2. Կոստանեանց. Կ.—Գրարատ բայերի խոսքահամար մի աղիւսակի մէջ. գործնական և գիտական ուսումնասիրութեան համար. գինն է 25 կ.:

3. Երզնկեանց Եւ. Բէյ. — Խմբական ձայնագրեալ ազգային երգեր (սակաւաթիւ) 50 կ.:

4. Մ. Օրիս Բ. Լ. Օ. — փոքրիկ ձեռնարկ

գործնական անտեսութեան. թարգմանեց զանազան փոփոխութիւններով Ս. Պալասա-նեանց 50 կ.:

5. Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց 80 կ.:

6. Զոն Ստ. Բելկի—մառար, Ֆիզիքա-կան և բարոյական ինքնակրթութիւն 60 կ.:

**Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ա Կ Ե Ն**

Հրատարակութեամբ Զ. Գրիգորեանցի

1. Մերկեցի— Թէոդորոս Ռշտունի

2. — Թորոս Լեւոնի (2-րդ տը-պագրութիւն)

3. Գամառ-Քաթիկայի—մանկական երգեր և ոտանաւորներ:

7—12

**ԻՆՁ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻՍԿԱՆ ՄԱԳԱՋԻՆԸ** ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէլ և այլ ապրանքներ: Որովհետեւ այդ մագալինին ստանում է թէլ ուղղակի պլանտատորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականաւոր է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէլ առաջին տեսակի, կակաօ և շօլալոգ-ֆրայ, մութաւ և կօնֆէկաներ 25% աւելի է ծախ, քան թէ

ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէր վոլկերներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, դանակներ, դաշեր, թէլամաններ, բաժակներ, թասեր, գուլպանեկանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակիլնոշներ, կալնիօր, թուղթ, մատիտներ, տետրակներ, զրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի է ծախ քան թէ ուրիշ տեղ: Արժանաւ գաղթեալում:

100—79